ՀԱՄԱՌՈՏ ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Գ. ԲԱՇԻՆՋԱՂՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ.— Մայիսի 20-ին Երևանում, Հայկական ՍՍՌ պետական պատկերասրահում բացվեց հայ ռեալիստական նկարչության նշանավոր դեմքերից մեկի՝ բնանկարիչ Գեորգ Բաշինջաղյանի գործերի ցուցահանդեսը։

Ցուցահանդեսում ներկայացված է նկարչի 132 բնանկար՝ կատարված 1883-ից մինչև 1924 թվականը։ Տարբեր մեծության այդ բոլոր կտավներն արտացոլում են Հայաստանի և Անդրկովկասի ամենագեղատեսիլ վայրերը, լիրիկական ջերմությամբ արտահայտում հարազատ բնաշխարհի հմայքն ու գեղեցկությունը։

Գ. Բաշինջաղյանը բնության պասսիվ վերարտադրողը չի եղել. նա խորապես իմաստավորել է իր ստեղծագործությունը, բովանդակություն է դրել իր կտավներում։ Այդ բովանդակությունը հայրենասիրությունն է, վարակիչ սերը դեպի հայկական ու վրացական բնաշխարհը։ Այդպիսին են «Վաղ գարուն», «Կաղրեկ», «Դիլիջանի ճանապարհը», «Դարիալի կիրճը», «Սևանահինի կիրճը», «Ճանապարհ Ախալցխայից Արասթումանը» և շատ ուրիշ գործեր։

Հայ գեղանկարչության մեջ թերևս ոչ ոք այսպիսի խորությամբ չի արտացոլել Արարատ լեռան ու Սևանա լճի թեման, ինչպես Գ. Բաշինջաղյանը։ Տարվա ամենատարբեր եղանակներին, օրվա ամենատարբեր պահերին տաղանդավոր նկարիչը իրեն հատուկ վարպետությամբ ու ջերմ վերաբերմունքով վերարտադրել է Սևանն ու Մասիսը, ստեղծելով հայ բնանկարային նկարչության չգերազանցված օրինակներ։

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻՆ.— Հայ խոշորագույն երգիծաբան Հակոբ Պարոնյանի մահվան 60-ամյակի առթիվ ցուցահանդես բացվեց Հայկական ՍՍՌ Ալեքսանդր Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանում։

Այստեղ ցուցադրված են մեծ գրողի տարբեր տարիներում տպագրված ստեղծագործությունները, սովետական շրջանում հրատարակված երկերի լիակատար ժողովածուի հատորները, առանձին գրքեր և ռասմնասիրություններ՝ նվիրված գրողի կյանքին ու ստեղծագործությանը։

Այցելուները հետաքրքրությամբ են ծանոթանում հանճարեղ երգիծաբանի բարձր արվեստով գրված այն ստեղծագործություններին, որոնց մեջ արտացոլվել են 19-րդ դարի 70—80-ական թվականների արևմտահայ իրականության համարյա բոլոր երևույթները։

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանում բացվեց հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի ծննդյան 85-ամյակին նվիրված ցուցահանդեսը։

Ցուցատախտակների վրա զետեղված են նշանավոր բանաստեղծի գործունեության վերաբերյալ բազմաթիվ էքսպոնատներ։

Գրադարանը «Հիշարժան տարեթվերի օրացույց» շարքով լույս է ընծայել նաև հերթական օրացույց-թերթիկ՝ նվիրված բանաստեղծի ծննդյան 85-ամյակին։

ՀԻՇԱՏԱԿԻ ԵՎ. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ, ՀԱՄԵՐԳՆԵՐ

ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Մայիսի 10-ին Երևանի Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ երեկո՝ նվիրված հայ մեծանուն նկարիչ Փանոս Թերլեմեզյանի մահվան 10-ամյակին։

Ժողովրդական նկարչի հիշատակը հարգելու էին եկել նկարիչներ, քանդակագործներ, Գեղարվեստական ինստիտուտի և ուսումնարանի ուսանողներ, արվեստի այլ բնագավառների աշխատողներ։

Փանոս Թերլեմեզյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց Ե. Մարտիկյանը։

ՍԻՄԱԿ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Մայիսի 27-ին, Ուսուցչի տանը, հանդիսավոր իրադրության մեջ նշվեց վաստակավոր ուսուցիչ, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ Սիմակ Սա-

հակյանի մանկավարժական գործունեության 50-ամյակը։

Ուսուցչի տանն էին հավաքվել Երևանի մտավորականության ներկայացուցիչներ և Սահակյանի բազմաթիվ աշակերտներ։

Սիմակ Սահակյանի կյանքի և մանկավարժական գործունեության մասին զեկուցեց վաստակավոր ուսուցչուհի Մ. Հայկազունին, վեր հանելով հոբելյարի 50 տարվա մանկավարժական արդյունավետ աշխատանքը և պետական ու հասարակական գործունեությունը։

Սիմակ Սահակյանին, նրա մանկավարժական գործունեության 50-ամյակի առթիվ, ողջունեցին Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչները։

Վերջում հոբելյարը ջերմ շնորհակալություն հայտնեց իրեն արժանացրած պատվի համար։

ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊՈՆՋԻԱՑԻ ԵՐԵԿՈՆԵՐ.— Ապրիլի 3-ին և 6-ին, մայրաքաղաքի բարձրագույն դպրոցների ուսանողության և երիտասարդության համար, Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում կայացան սովետահայ պոեզիայի երեկոներ։ Բացման խոսքով հանդես եկավ Հայֆիլհարմոնիայի գրական բաժնի վարիչ Է. Խոջիկը։ «Պայքարի և խաղաղության պոեզիան» թեմայով զեկուցում կարդաց Վ. Մնացականյանը, որը բնութագրեց վերջին տարիների ընթացքում սովետահայ բանաստեղծների ձեռք բերած հաջողությունները։

Իրենց նոր ստեղծագործությունների ընթերցմամբ հանդես եկան Հր. Հովհաննիսյանը, Ս. Կապուտիկյանը, Մ. Մարգարյանը և Հ. Շիրազը, որոնց ներկա գտնվողներն ընդունեցին ջերմությամբ։

Սովետահայ պոեզիայի լավագույն նմուշներն արտասանեցին Թ. Դեմուրյանը, Ե. Քալանթարը, Վ. Մովսիսյանը և Հ. Գարագաշը։

ԴԵՐԱՍԱՆ ԳԵՈՐԳ ՋՄՇԿՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Հայաստանի Թատերական ընկերությունում կայացավ երեկո՝ նվիրված հայ խոշորագույն դերասան Գեորգ Ջմշկյանին։

Երեկոն բացեց պրոֆ. Լ. Քալանթարը։ Ջմշկյանի պատմական նշանակությունը բնութագրող զեկուցումով հանդես եկավ Ռ. Զարյանը։ Բնութագրելով Ջմշկյանին որպես թատերական խոշոր գործիչի և մեծ դերասանի, զեկուցողը գնահատեց նրան որպես անցյալ դարի 60—70-ական թվերի առաջավոր դերասանական սերնդի գաղափարական պարագլխի, որի ռեալիստական ստեղծագործությունը, խորապես կապված լինելով ժողովրդի հետ, տոգորված իր ժամանակի ազատագրական իդեալներով, հայ ազգային բեմական արվեստի հիմքերից մեկը հանդիսացավ։

Այնուհետև ելույթ ունեցան Ս. Հարությունյանը և Ա. Բաբայանը, իսկ գեղարվեստական բաժնում հանդես եկան ժողովրդական արտիստներ Ա. Ավետիսյանը և Գ. Ջանիբեկյանը, Թատերական ինստիտուտի ուսանողները ներկայացրին մի գործողություն «Քանդած օջախ» պիեսից։

ՆՂԻՇԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ.— Լրացավ հայ դեկորատիվարվեստի ականավոր դեմքերից մեկի՝ տաղանդավոր նկարիչ Նղիշե Թադևոսյանի մահվան 15-ամյակը։

Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ նկարչի հիշատակին նվիրված երեկո։ Ե. Թադևոսյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցեց արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Դրամբյանը։

— Վաղարշապատցի ջրաղացպանի որդի Ե. Թադևոսյանն իր գեղարվեստական կրթությունն ստացել է Մոսկվայում,— ասաց զեկուցողը,— աշակերտելով ժամանակի ուսա առաջավոր նկարիչներին։ Դեռևս ուսանողական տարիներին նա մեծ համբավ է ձեռք բերում, արժանանում մի շարք մրցանակների։ Նշանակալից են անցյալ դարի 90-ական թվականներին ստեղծած նրա գործերը։ «Հայրենի ափերին», «Վանքի դպրոցում», «Կեսօրվա ճաշ» և այլ կտավներում նա ռեալիստորեն պատկերել է հայ ժողովրդի դառը կյանքը, գաղթականության ծանր վիճակը։ Իր ստեղծագործությունների մեջ նա շարունակում է ռուսական նկարչության լավագույն ավանդությունները հայ կերպարվեստում։

1901 թվին նկարիչն իր նյութական անապատ վիճակը բարելավելու համար տեղափոխվում է Թբիլիսի, ուր և ապրում է մինչև կյանքի վերջը, դասավանդելով տեղի դպրոցներում։ Այդ տարիներին՝ մինչև Մեծ Հոկտեմբերը նրա ստեղծագործությունների մեջ զգացվում է հակառեալիստական ուղղությունների ազդեցությունը, նա տուրք է տալիս անկումային տրամադրություններին. սակայն Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակը նոր բեկում է առաջացնում Թադևոսյանի արվեստի մեջ, նա կրկին հանդես է գալիս որպես իսկական ռեալիստ։ Սովետական շրջանում նրա ստեղծած գործերից առանձնապես ուշադրավ են Հովհ. Թումանյանի, Կոմիտասի, Շիրվանզադեի և Հ. Հակոբյանի բարձրարվեստ դիմանկարները։

Արվեստի աշխատողների տանը ցուցադրված էին անվանի նկարչի մի շարք դիմանկարները։

ՀԱՐՈ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԵԿՈՆ.— Ապրիլի 11-ին Երևանի Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ Ստալինյան մրցանակի լաուրեատ, արվեստի վաստակավոր գործիչ, կոմպոզիտոր Հարո Ստեփանյանի ստեղծագործական երեկոն։

Ներկա էին կոմպոզիտորներ, երաժշտագետներ, գրողներ, նկարիչներ, արվեստի այլ բնագավառների և մտավորականության ներկայացուցիչներ։

Կոմպոզիտոր Ա. Սաթյանի բացման խոսքից հետո Հարո Ստեփանյանի կյանքի և ստեղծագործական ուղու մասին զեկուցեց արվեստի վաստակավոր գործիչ Ս. Գասպարյանը։

Երեկոյի երկրորդ բաժնում արվեց ճոխ համերգ Հարո Ստեփանյանի ստեղծագործություններից, որին մասնակցեցին արտիստներ Լ. Մամաջանյանը, Հ. Տեր-Ղևոնդյանը, Գ. Ադամյանը, Մ. Մխիթարյանը, Հ. Բոգտանյանը և Ալեքսանդր Սպենդիարյանի անվան պետական կվարտետը։

ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՎԱՐՏԵՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵԿՈՆ.— Արվեստի աշխատողների տանը տեղի ունեցավ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան պետական լարային կվարտետի ստեղծագործական երեկոն։ Արվեստագիտության դոկտոր, արվեստի վաստակավոր գործիչ Գ. Տիգրանյանն իր ներածական խոսքի մեջ համառոտակի գծեց կվարտետի անցած ստեղծագործական ուղին։

Զեկուցումից հետո համերգով հանդես եկավ Սպենդիարյանի անվան կվարտետը, որ կատարեց իր ծրագրի լավագույն համարները՝ Չայկովսկու, Կոմիտասի, Սպենդիարյանի, Շուպերտի, Սմետանայի, երիտասարդ կոմպոզիտոր Էդ. Զրբաշյանի և ուրիշների ստեղծագործությունները։

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ՆՎԻՐՎԱԾ Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 30-ԱՄՅԱԿԻՆ.— Մայիսի 26-ին, Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի հիմնադրման 30-րդ տարեդարձին։

Ռեսպուբլիկայի խոշորագույն ուսումնական հաստատության տարեդարձը նշելու համար թատրոնի դահլիճն էին հավաքվել պետական կազմակերպությունների և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ, արվեստի ու գրականության աշխատողներ, բանվորներ, ուսանողներ։

Պետական համալսարանի անցած 30 տարվա նվաճումների մասին զեկուցումով հանդես է գալիս համալսարանի ռեկտոր Գ. Պետրոսյանը։

Ողջույնի խոսքերով հանդես են գալիս նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի կողմից ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Ներսիսյանը, Հայկական ՍՍՌ կրթության մինիստրության կողմից կրթության մինիստր Ս. Միքայելյանը, Երևանի բարձրագույն ուսումնական և գիտա-հետազոտական հաստատությունների կողմից՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Լ. Հովհաննիսյանը։

30-ամյակի կապակցությամբ Երևանի Պետական համալսարանի հասցեով ստացվել են բազմաթիվ ողջույնի հեռագրեր, այդ թվում՝ Մոսկվայի, Լենինգրադի, Խարկովի, Թբիլիսիի, Բաքվի, Տաշքենդի, Սվերդլովսկի համալսարաններից, ակադեմիկոս Կոսմինսկուց, բանակի գեներալ Ի. Բագրամյանից, գրող Մ. Շահինյանից, ֆիզիոլոգ Լ. Հասրաթյանից և այլն։

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ.— Հունիսի 25-ին Հայֆիլհարմոնիայի համերգային դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Ալեքսանդր Մյասնիկյանի անվան Պետական հանրային գրադարանի հիմնադրման 30-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ։

Հանդիսավոր նիստը բացեց Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Կուլտուրա-լուսավորական հիմնարկների գործերի կոմիտեի նախագահ Հովհ. Բաղդասարյանը։

Գրադարանի գոյության 30-ամյակի մասին զեկուցեց գրադարանի դիրեկտոր Ա. Ստեփանյանը։

Գրադարանի 30-ամյակը ողջունեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի, Վրացական ՍՍՌ Կ. Մարքսի անվան Պետական հանրային գրադարանի, Ադրբեջանական ՍՍՌ Ախունդովի անվան Պետական հանրային գրադարանի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։

ՈՒՍՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ.— Ընթացիկ տարում բարձրագույն ուսումնական հաստատությունները և մանկավարժական ուսումնարանները դպրոցներին կտան մոտ 1.300 դասատուներ, որոնցից ավելի քան 700-ը բարձրագույն կրթությամբ և ավելի քան 500-ը՝ միջնակարգ։

Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրությունն արդեն ավարտել է մանկավարժության նոր մասնագետների տեղաբաշխումը։ Երիտասարդ դասատուների մեծ մասը աշխատելու է ռեսպուբլիկայի շրջանների տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներում։

ԵՐԵՎԱՆԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ.— Երևանի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտը տվեց իր հերթական՝ 3-րդ շրջանավարտները՝ թվով 114 մարդ։ Շրջանավարտներն ուղարկված են Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության տրամադրության տակ, և արդեն ստացել են նշանակումներ։ Ինստիտուտն ավարտածների մեծ մասը մեկնելու է շրջանները մանկավարժական աշխատանք կատարելու համար։

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆՈՐ ՋՈԿԱՏ.— Երևանի Զոոանասնաբուժական ինստիտուտը տվեց իր հերթական շրջանավարտները։ Ինստիտուտն ավարտեցին 68 անասնաբույծներ։ Անասնաբուժության երիտասարդ մասնագետները ուղարկվում են ռեսպուբլիկայի բոլոր շրջանները։ Շրջանավարտների մի մասը աշխատելու է Ուկրաինական ՍՍՌ-ում, Ադրբեջանական ՍՍՌ-ում, Վրացական ՍՍՌ-ում և Կրասնոդարի երկրամասում։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ.— Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտը տվեց իր հերթական շրջանավարտները։ Գյուղատնտեսության նոր, երիտասարդ մասնագետները՝ թվով 115 մարդ, որոնցից 59-ը դաշտավարներ են, մյուսները՝ այգեգործներ, ռեսպուբլիկայի շրջաններն են մեկնելու մշտական աշխատանքի։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Լուսավորության մինիստրության Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը ռեսպուբլիկայի մի շարք քաղաքներում և շրջանային կենտրոններում կազմակերպել է ուսուցիչների որակավորման մեկամսյա դասընթացներ։

Դասընթացներում սովորում են մասսայական դպրոցների ավելի քան 1.000 ուսուցիչ։ Դասընթացներում ավանդվում են մանկավարժություն, մեթոդիկա և այլ առարկաներ։

Հունիսի 20-ից Երևանում, Լենինականում, Կիրովականում և Նոր Բայազետում սկսեցին գործել նաև 5—10-րդ դասարանների հայոց, ռուսաց լեզուների ու գրականության, օտար լեզուների, ֆիզիկայի, մաթեմատիկայի, պատմության, աշխարհագրության, բնագիտության, քիմիայի և այլ առարկաների դասատուների, ինչպես նաև դիրեկտորների, ուսմասվարների և դպրոցական ցանցի այլ աշխատողների որակավորման մեկամսյա դասընթացներ։

Այս դասընթացներում դասավանդում են ռեսպուբլիկայի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներ և գիտաշխատողներ։

Այս տարի ուսուցիչների որակավորման դասընթացներում սովորում են մոտ 3.000 ուսուցիչ և ժողովրդական կրթության ցանցի այլ աշխատողներ։

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ.— Հայաստանի Պետական հրատարակչությունը դպրոցականների համար մինչև նոր ուսումնական տարին լույս է ընծայելու 82 անուն դասագիրք՝ ավելի քան երկու միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով։ Արդեն հրատարակվել են 44 անուն դասագրքեր։

Զգալիորեն ավելացվում է մեթոդական գրականության, ծրագրերի, ուսուցչական ձեռնարկների հրատարակությունը նոր ուսումնական տարվա համար։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ.— Երաժշտական դպրոցի բազայի վրա Կիրովականում բացվել է երաժշտական նոր ուսումնարան։ Առաջին կուրսում 1951—1952 ուսումնական տարում կսովորեն 30 մարդ, որոնց թվում երաժշտական դպրոցի այս տարվա շրջանավարտները։

ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՈՒԺԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒՄ.— Մայիսի 2-ին բացվեց Երևանի Մանկական երկաթուղու սեզոնը։ Գնացքի վագոնները նորոգված են, կայարանների թիվն ավելացել է, գնացքը երթևեկում է «Պիոներական» կայարանից մինչև «Ուրախություն» և «Արևային» կայարանները։ Երկաթուղին սպասարկում են պատանի երկաթուղայինների դասընթացներն ավարտած ավելի քան 250 պիոներ-դպրոցականներ։ Երկաթուղում

ստեղծված է ներքին ռադիո-հանգույց, կազմակերպված է երկաթուղային տեխնիկական առանձնասենյակ։

Բարեկարգված է մանկական երկաթգծի կուլտուրայի և հանգստի պուսայդին, կարգավորված են ծառուղիները, գլխավոր մուտքի աստիճանների աջ և ձախ կողմերը կանաչապատված են։

Այգում ելույթներ ունեցան էստրադային, փսոլային նվագախմբերը, ժողովրդական գործիքների խմբերը, ինչպես նաև Պիոներների պալատի ու Մանուկների գեղարվեստական դաստիարակության տան ինքնագործ խմբերը։ Տեղի ունեցան նաև դրոյոցական սպորտ խմբակների և թիմերի ընկերական հանդիպումներ։

ԴԻՎԻԶԱՆԻ ՍԱՆԱՏՈՐԻԱՅՈՒՄ.— Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության հանգստյան տների վարչության սանատորիան ընդունեց հիվանդների առաջին խումբը։ Սանատորիայի շենքերը նորոգված են, բարեկարգված են բակերը, պուրակները ու ծաղկանոցները։ Ամառվա ընթացքում այստեղ բուժվելու են 3.000 մարդ։

Կուրորտային սեզոնն սկսվել է նաև ՀԱՄԿՄ-ի Գոլովինոյի սանատորիայում։

«ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՆԱՏՈՐԻԱՅԻ ԲԱՑՈՒՄԸ.— Կիրովականի «Արմենիա» սանատորիան մայիսի 17-ին ընդունեց բուժվողների առաջին խումբը։ Կարդի են բերվել և հարստացվել բուժասենյակները, նորոգվել են սանատորիայի բոլոր բաժինները, ակումբն ու գրադարանը, ջրավազանը։ Ննջարանները կահավորված են փափուկ կահույքով և նոր մահճակալներով։ Զգալի աշխատանք է կատարված սանատորիայի հողաբաժնի և նրա շրջակայքի բարեկարգման, կանաչապատման ու ծաղկազարդման ուղղությամբ։

Այս տարի սանատորիայում բացի ֆունկցիոնալ ներվային սիստեմի քայքայում ունեցող հիվանդներից, բուժվելու են նաև սրտի և ստամոքսաաղիքային տրակտի հիվանդություններ ունեցողներ։ Այդ նպատակով այստեղ ստեղծվել են նոր ածխաթթվական լողարաններ, բուժման տանձնասենյակներ։ Սանատորիայում կազմակերպվել է նաև կանացի հիվանդությունների բուժման բաժին։

Ամեն ամիս «Արմենիա» սանատորիայում Հայաստանից և եղբայրական ռեսպուբլիկաներից կհանգստանան ու կբուժվեն 200 մարդ։

ԱԽՏԱԼԱՅԻ ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏԱՆ ԲԱՑՈՒՄԸ.— Այլավերդում Ախթալայի հանգստյան տունը սկսեց նոր սեզոնը։

Ապրիլի 15-ին հանգստանալու եկան Երևանի, Լենինականի, Կիրովականի գործարանների, հիմնարկ-ձեռնարկությունների մի խումբ բանվոր-ծառայողներ։

Առաջին օրը հանգստացողների համար տրվեց համերգ։

Նորոգված են հանգստյան տան շենքերը, ֆիզկուլտ-հրապարակը, կարգավորված են ծառուղիները, տնկվել են դեկորատիվ ծառեր, նոճիներ, չինական վարդենիներ։ Կառուցվել է նոր շենք, ուր տեղավորված է 40 մահճակալ։ Հանգստյան տունն ունի հարուստ դրադարան՝ ավելի քան 4.000 գրքով։

Յուրաքանչյուր հերթափոխում Ախթալայում հանգստանալու են 250 մարդ։

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ՄԱՅՐԵՐԻՆ

Նոր-Բայազետի շրջանի 1.458 բազմազավակ մայրեր 1950 թվականին և այս տարվա անցած ամիսներին պետությունից ստացել են ավելի քան 2.000.000 ռուբլու միանվագ ու ամսական նպաստ։ 1.800 բազմազավակ մայրեր պարգևատրվել են «Մայրական փառք» շքանշաններով ու «Մայրության մեդալ» մեդալներով։ 20 կին արժանացել են «Հերոսուհի մայր» պատվավոր կոչման։

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահությունը ապրիլի 9-ի հրամանագրով պարգևատրել է Երևան քաղաքի Կիրովյան, Մոլոտովյան և Սպանդարյանի շրջաններից մի շարք բազմազավակ մայրերի։ Ութ երեխա ծնած և դաստիարակած երեք կին ստացել են «Մայրական փառք» 2-րդ աստիճանի շքանշան, յոթ երեխա ծնած և դաստիարակած չորս կին՝ «Մայրական փառք» 3-րդ կարգի շքանշան, վեց երեխա ծնած և դաստիարակած տասնմեկ կին՝ «Մայրության մեդալ» 1-ին աստիճանի մեդալ, հինգ երեխա ծնած և դաստիարակած երեսունմեկ կին՝ «Մայրության մեդալ» 2-րդ աստիճանի մեդալ։

Ապրիլի 25-ի մի ուրիշ հրամանագրով, պարգևատրվել են Երևան քաղաքի Միկոյանի, Մոլոտովյան և Ստալինյան շրջաններից մի ուրիշ խումբ բազմազավակ մայրեր։ Ութ երեխա ծնած և դաստիարակած երկու կին ստացել են «Մայրական փառք» 1-ին աստի-

ճանի շքանշան, ուր երեխա ծնած և դաստիարակած երեք կին՝ «Մայրական փառք» 2-րդ աստիճանի շքանշան, յոթ երեխա ծնած և դաստիարակած երեք կին՝ «Մայրական փառք» 3-րդ աստիճանի շքանշան, վեց երեխա ծնած և դաստիարակած քսան կին՝ «Մայրության մեդալ» 1-ին աստիճանի մեդալ, հինգ երեխա ծնած և դաստիարակած երեսուն կին՝ «Մայրության մեդալ» 2-րդ աստիճանի մեդալ։

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գյուղական բժշկական տեղամասերի 15 բժիշկներ, որոնք որակավորման բարձրացման դասընթացներ են անցել Երևանի կլինիկաներում, մեկնեցին իրենց մշտական աշխատանքի վայրերը։

Մինչև տարվա վերջը Երևանի կլինիկաներում, ինչպես նաև Մոսկվայում, Լենինգրադում, Խարկովում ու Թբիլիսիում մասնագիտացման և որակավորման դասընթացները կանցնեն 260 բժիշկ, որոնց մեծամասնությունը ռեսպուբլիկայի շրջաններից է։

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրությունը մինչև տարվա վերջը շրջանները աշխատանքի կուղարկի 120 բժիշկ։ Նրանցից 60-ը մինչև այդ աշխատում էին Երևանում։ Մնացած բժիշկները Երևանի Բժշկական ինստիտուտի շրջանավարտներ են։

Բժիշկների թվի ավելացումը հնարավորություն կտա շրջանային հիվանդանոցներում ու պոլիկլինիկաներում բանալ նոր բաժանմունքներ։ Աղինի, Վեդու, Թալինի և այլ շրջաններում կազմակերպվում են վիրաբուժական բաժանմունքներ, Կրասնոսելսկի, Մեղրու, Սիսիանի շրջաններում՝ ռենտգենոլոգիական, Գորիսի, Մարտունու, Նոյեմբերյանի շրջաններում՝ ականջի-կոկորդի-քթի բաժանմունքներ, տասը շրջաններում՝ աչքի հիվանդությունների բաժանմունքներ։

Մենդաքերական տները մասնագետներով ապահովելու համար մանկաբարձական դպրոցների այս տարվա շրջանավարտներից ռեսպուբլիկայի գյուղերը աշխատանքի կուղարկվեն 120 մանկաբարձուհիներ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՎԵԼՆԵՐԸ ԼԻՏՎԵՐԵՆ

Վիլնյուսում, Լիտվական Պետական հրատարակչությունը լիտվերեն լույս է ընծայել հայկական նովելների մի ստվար ժողովածու։ Ժողովածուում տեղ են գտել Գրիգոր Զոհրապի, Երուխանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Զորյանի, Վ. Անանյանի, Հրաչյա Քոչարի, Ս. Պայապատի, Հմայակ Սիրասի, Արաքսի և այլ հեղինակների նովելներն ու պատմվածքները։ Գրքի վերջում կան համառոտ ծանոթություններ և որոշ տեղեկություններ հեղինակների մասին։ Հրատարակությունը կատարված է խնամքով և բարձր հաշակով։

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԵՐ

Ճարտարապետական հուշարձանների պահպանման ռեսպուբլիկական կոմիտեն այս տարի խոշոր աշխատանք է ծավալել հայ ժողովրդի ճարտարապետական հարուստ ժառանգության վերականգնման և պահպանման ուղղությամբ։ Խումբն սկսել է Հախպատ գյուղի ճարտարապետական հուշարձանների վերականգնման աշխատանքները։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում քաղաքացիական ճարտարապետության այստեղ պահպանված ամենաարժեքավոր հուշարձաններից մեկը՝ աղբյուրը, որը կառուցվել է 1258 թվականին։

Վերականգնողների երկրորդ խումբը կմեկնի հայկական ճարտարապետության հուշարձաններով հարուստ Աշտարակի շրջանը։ Այստեղ վերականգնվելու են 13-րդ դարին վերաբերող մի շարք հուշարձաններ Տեղեր գյուղում։

Այս տարի վերականգնման աշխատանքներ կկատարվեն նաև Իջևանի շրջանում։ Դրանից բացի Ախթալի և Ապարանի շրջաններն են մեկնելու պետական արշավախմբեր՝ այնտեղ գտնվող ճարտարապետական հուշարձանները ուսումնասիրելու։